ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն հայտ ներկայացնելուց, և սույն կանոններին ծանոթանալուց հետո օտարերկրացի դիմորդը Համալսարանի www.ysmu.am կայքի համապատասխան էլեկտրոնային հարթակում պետք է լրացնի **«ԴԻՄՈՐԴԻ ՀԱՐՑԱԹԵՐԹ»:**
2. Քննությունների ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությանը դիմորդը կարող է ծանոթանալ Համալսարանի պաշտոնական կայքի տեղեկատվական համապատասխան հարթակից:
3. Սահմանվում են քննությունների անցկացման և բողոքարկման ընդհանուր հետևյալ պահանջները.
   - Քննության տևողությունը կազմում է 60 րոպե:
   - Առաջադրանքների քանակը կազմված է 50 թեստից:
   - Դրական անցողիկ շեմ է համարվում 26 թեստերի ճիշտ պատասխանը:
   - Քննությունների արդյունքները հրապարակվում է քննության ավարտից հետո առնվազն 3 ժամ անց:
   - Դիմորդն իրավունք ունի բողոքարկելու քննության արդյունքները՝ քննությունների արդյունքների հրապարակումից հետո 1 ժամվա ընթացքում:

Դիմորդի պարտականությունները և իրավունքները

1. Քննության օրը դիմորդը պետք է Համալսարան ներկայանա քննության մեկնարկից 30 րոպե առաջ:
2. Դիմորդն իր հետ պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ:
3. Քննության ժամանակ դիմորդն իրավունք ունի՝
   - սևագրության համար օգտագործել պատասխանների ձևաթղթի ետնամասը,
   - քննության պատասխանատուներից պահանջելու լրացուցիչ նշումների համար թերթիկ՝ անհրաժեշտության դեպքում,
   - քննության պատասխանատուներին տալ միայն տեխնիկական բնույթի հարցեր,
   - քննության ժամանակ օգտագործել մատիտ՝ նախնական պատասխանները նշելու համար՝ գրիչով ջնջումներից և ուղղումներից խուսափելու համար,
   - օգտագործել հաշվիչ՝ խնդիրների լուծման համար,
   - ունենալ «Մենդելեևի աղյուսակ»՝ քիմիա առարկայի քննության համար:
4. Քննության ժամանակ չի թույլատրվում՝
   - կատարել ջնջում և (կամ) ուղղում քննական ձևաթերթի վրա,
   - օգտագործել բջջային հեռախոս կամ տեխնիկական այլ միջոց,
   - հուշել և խանգարել քննության ընթացքը:
5. Քննական ձևաթերթը պետք է լրացված լինի.
   - կապույտ գրիչով (մատիտով գրված պատասխաններն առոչինչ են համարվում),
   - առանց գրիչով ուղղումների և (կամ) ջնջումների (պատասխանի ուղղումն առոչինչ է համարվում).
   - ամբողջությամբ (բաց թողնված պատասխաններով ձևաթերթը չի ընդունվի):